

DOI: 10.59560/18291155-2025.2-93

ԱՆԱՀԻՏ ՄԱՆԱՍՅԱՆ
ՀՀ մարդու իրավունքների պաշտպան,
ԵՊՀ սահմանադրական
իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ

ՄԻԼԵՆԱ ՏՈՆԵՅԱՆ
ՀՀ մարդու իրավունքների
պաշտպանի օգնական

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Ամփոփագիր

Աշխատանքը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանությանն ու խթանմանն առնչվող խնդիրներին: Աշխատանքի շրջանակում մանրամասն ուսումնասիրվել և վեր են հանվել ոլորտում առկա խնդիրները, ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց նկատմամբ խտրականության արգելքին, ինքնության պահպանման տարրերի՝ լեզվի, կրոնի, ավանդույթների և մշակույթի պահպանման և զարգացման իրավունքներին վերաբերելի միջազգային և ներպետական իրավական կարգավորումները, միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանին տրված հանձնարարականները: Առկա խնդիրների և վերը նշված կարգավորումների համապարփակ վերլուծության արդյունքում ներկայացվել

են առաջարկություններ՝ ուղղված խնդիրների համակողմանի լուծմանը և ոլորտի կատարելագործմանը:

Հիմնաբառեր. ազգային փոքրամասնություն, իրավունքների պաշտպանություն և խթանում, խտրականության արգելք, ինքնության պահպանման տարրեր, լեզվի պահպանման իրավունք, մշակութային ինքնության պահպանում, հասարակական կյանքում արդյունավետ մասնակցություն:

1. Ներածություն

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման մեխանիզմների շարունակական զարգացումն առանցքային նշանակություն ունի ժամանակակից աշխարհում նրանց իրավունքների երաշխավորման տեսանկյունից:

Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով մի շարք միջազգային փաստաթղթեր, ստանձնել է կոնկրետ պարտավորություններ ազգային փոքրամասնության պատկանող անձանց՝ իրենց փոքրամասնության լեզուն սովորելու, կրթության իրավունքի, մշակույթի պահպանման և զարգացման, ինչպես նաև ինքնության հիմնական տարրերի՝ կրոնի, լեզվի, ավանդույթների և մշակութային ժառանգության պահպանման, ինչպես նաև խտրականության բացառման համատեքստում:

Չնայած ազգային փոքրամասնությունների իրավունքների երաշխավորման առնչությամբ ստանձնած պարտավորություններին՝ ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման առնչությամբ գոյություն ունեն մի շարք խնդիրներ, որոնց լուծման նպատակով անհրաժեշտ է պատշաճ և գործուն կառուցակարգերի մշակում և իրականացում: Նշված խնդիրները վերաբերում են ինչպես ազգային փոքրամասնությունների նկատմամբ իրավահավասարության ապահովմանն ու խտրականության բացառմանը, այնպես էլ վերջիններիս ինքնության պահպանման տարրերին՝ լեզվի, կրոնի, մշակույթի և ավանդույթների պահպանմանն ու զարգացմանը:

Հենց այս խնդիրներն են վերլուծության առարկա դարձել հոդվածի շրջանակներում: Աշխատանքում ներկայացվել են դրանց վերաբերյալ առկա միջազգային չափանիշներն ու ներպետական իրավակարգավորումները, պետության կողմից ձեռնարկված քայլերը, ինչպես նաև ոլորտում առկա խնդիրները: Այս համատեքստում արվել են համապատասխան եզրահան-

գումներ և ներկայացվել առաջարկներ՝ վկայակոչված խնդիրների լուծման ուղղությամբ:

2. Իրավահավասարությանն առնչվող համապարփակ օրենսդրության անհրաժեշտությունը ազգային փոքրամասնությունների իրավունքների երաշխավորման և խտրականության բացառման համատեքստում

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման համատեքստում բացառիկ կարևորություն ունեն իրավահավասարության ապահովումն ու խտրականության բացառումը, քանի որ ազգային փոքրամասնությունները բնակվում են տվյալ երկրի բնակչության մեծամասնության շրջանում, հետևաբար՝ մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքներով, օրինակ՝ լեզվի, կրոնի, մշակույթի, ավանդույթների տարբերությամբ պայմանավորված՝ կարող են հանդիպել տարբեր մարտահրավերների, այդ թվում՝ խտրական վերաբերմունքի դրսևորումների:

Խտրականության բացառումը և առհասարակ իրավահավասարությունը հանդիսանում են մարդու իրավունքների պաշտպանության հիմնական և համընդհանուր սկզբունք[1] և միջազգային իրավունքի հիմնարար բաղադրիչ, որը առաջացնում է անմիջական և ընդհանրական, համալիր (cross-cutting) պարտավորություններ[2]:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների երաշխավորման և վերջիններիս նկատմամբ խտրականության բացառման առնչությամբ Հայաստանի Հանրապետությունը, Սահմանադրությամբ կարգավորումներ նախատեսելուց զատ, ստանձնել է մի շարք պարտավորություններ՝ ամրագրված տարատեսակ միջազգային իրավական փաստաթղթերով:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից,

[1] Տե՛ս CCPR General Comment No. 18: Non-discrimination, UN Human rights committee, November 10, 1989, https://www.refworld.org/legal/general/hrc/1989/en/6268

[2] Տե՛ս General comment no. 20, Non-discrimination in economic, social and cultural rights (art. 2, para. 2, of the International Covenant on Economic, Social and Cultural Rights), UN. Committee on Economic, Social and Cultural Rights, 2009, https://digitallibrary.un.org/record/659980?v=pdf:

հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Շրջանակային կոնվենցիա) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար երաշխավորել օրենքի առջև հավասարություն և օրենքով հավասար պաշտպանություն: Այդ առումով արգելվում է ազգային փոքրամասնության պատկանելության վրա հիմնված ցանկացած խտրականություն:

Շրջանակային կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կողմերը պարտավորվում են ձեռնարկել համապատասխան միջոցներ այն անձանց պաշտպանելու համար, ովքեր կարող են իրենց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելության պատճառով դառնալ սպառնալիքների, խտրականության, թշնամական կամ բռնի գործողությունների զոհ:

Ուստի, սահմանադրական և կոնվենցիոն մակարդակում ամրագրված են կարգավորումներ իրավահավասարության և ազգային փոքրամասնությունների նկատմամբ խտրականության բացառման առնչությամբ, որոնցից բխում է, որ պետությունները պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար երաշխավորել օրենքի առջև հավասարություն և օրենքով հավասար պաշտպանություն և բացառել ազգային փոքրամասնության պատկանելության վրա հիմնված ցանկացած խտրականություն, ինչպես նաև ձեռնարկել պատշաճ միջոցներ նշված խումբը ներկայացնող անձանց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելության տարբերությամբ պայմանավորված՝ խտրական դրսևորումները արգելելու ուղղությամբ: Մինչդեռ ՀՀ ոլորտային օրենսդրության մակարդակում սահմանված՝ ազգային փոքրամասնությանը պատկանելության հիմքով իրավահավասարության ապահովման և խտրականության բացառման, ինչպես նաև իրավունքների խթանման մեխանիզմները չի կարելի համարել համապարփակ, պատշաճ և գործուն:

Իրավահավասարության ապահովումը, խտրականության բացառումը, ազգային փոքրամասնությունների իրավունքների խթանումը չեն կարող սահմանափակվել կոնվենցիոն կամ սահմանադրական մակարդակում կամ առանձին իրավական ակտերում հատվածական կամ հռչակագրային կարգավորումներ նախատեսելով: Կարծում ենք, որ նշված նպատակների

իրականացման տեսանկյունից կարևոր է համապարփակ և միասնական իրավական ակտի ընդունումը, օրենսդրական արդյունավետ կառուցակարգերի նախատեսումն ու պատշաճ գործադրումը:

Մինչդեռ մեր, ինչպես նաև շատ այլ հասարակություններում, գերակայում է այն ընկալումը, որ ազգային փոքրամասնությունների իրավունքներին առնչվող ոլորտը ենթադրում է բացառապես առաջ եկող խնդիրներին արձագանքելու, դրանք ի հայտ գալու դեպքում լուծելու անհրաժեշտություն, և որևէ առանձնահատուկ խթանող քաղաքականություն ու կարգավորումներ անհրաժեշտ չեն այդ համատեքստում: Այս մոտեցումն ամբողջությամբ հակասում է թե՛ ոլորտի տրամաբանությանը, թե՛ այդ առումով առկա չափանիշներին:

Գտնում ենք, որ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանն ու խթանմանը միտված քաղաքականության և համապարփակ օրենսդրության մշակումն ու ընդունումն անհրաժեշտ է վերջիններիս ինքնության պահպանման և զարգացման համար հավասար հնարավորությունների ապահովման, նրանց նկատմամբ խտրականության բացառման, ինչպես նաև հասարակական, քաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքում ներառականության ապահովման տեսանկյունից: *Այդ հանգամանքը ենթադրում է պետության կողմից նշված ոլորտում ակտիվ և խթանող քաղաքականության իրականացում՝ առաջ եկող խնդիրներին արձագանքելու պարզ քաղաքականության փոխարեն:*

Դեռևս 2019 թվականին ՀՀ-ում շրջանառվել են «Իրավահավասարության ապահովման մասին» և «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքների նախագծերը, որոնք, սակայն, դեռ չեն ընդունվել: Այսինքն՝ ոլորտին վերաբերելի խնդիրները համակարգային առումով մնում են չկարգավորված՝ առաջ բերելով ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց իրավունքների պաշտպանությանն ու խթանմանն առնչվող մի շարք խնդիրներ:

Վերոնշյալ ոլորտի օրենսդրական դաշտի ընդունման անհրաժեշտությունն արձանագրվել է նաև միջազգային կազմակերպությունների կողմից: Մասնավորապես՝ «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի ընդունման առնչությամբ Հայաստանի Հանրապետությանը հանձնարարական են ներկայացրել ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների

կոմիտեն[1] և Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ՌԱԵՀ)[2]:

ԵԽ նախարարների կոմիտեն Հայաստանի կողմից Շրջանակային կոնվենցիայի իրականացման վերաբերյալ 2023 թվականի հունիսի 28-ի բանաձևում[3] որպես անհապաղ իրականացվող գործողություն առաջարկել է վերանայել «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծը՝ այն լիովին համապատասխանեցնելով միջազգային չափորոշիչներին, ներառյալ Շրջանակային կոնվենցիային՝ ապահովելով, որ վերջինիս բովանդակությունը քննարկվի բոլոր շահագրգիռ կողմերի հետ:

Իրավահավասարության, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման ոլորտում առանցքային նշանակություն ունի իրավապաշտպան գործունեություն իրականացնող դերակատարների, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեությունը[4]: Օրինակ՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանն իր հրապարակային գործունեության շրջանակում բազմիցս ընդգծել է նշված ոլորտում համապարփակ օրենսդրության ընդունման ու պատշաճ կիրառման կարևորությունը, ինչը գոյություն ունեցող խնդիրները հաղթահարելու կարևոր գրավականներից է: Նշված օրենսդրությունը չպետք է ունենա հռչակագրային բնույթ, այլ պետք է սահմանի իրական հնարավորություններ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների երաշխավորման համար՝ ընդգծելով ոլորտում պետության կոնկրետ պոզիտիվ պարտավորությունները, այդ թվում՝ երաշխավորելու և նպաստելու վերջիններիս մշակույթի, կրոնի, լեզվի, ավանդույթների պահպանմանը[5]:

Հիշատակման է արժանի և այն հանգամանքը, որ Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր ձևավորվել և գործում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով հասարակական խորհուրդ (սույն խորհրդին առավել

[1] Տե՛ս «Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ», Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, 2023 թվականի հոկտեմբերի 13, թիվ E/C.12/ARM/CO/4, 21-22 կետեր:

[2] Տե՛ս Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի՝ Հայաստանի վերաբերյալ զեկույցը, 2023 թվական, https://rm.coe.int/sixth-report-on-armenia/1680ab9e33

[3] Տե՛ս Resolution on the implementation of the Framework Convention for the Protection of National Minorities by Armenia, Committee of Ministers, 2023, https://search.coe.int/cm/pages/result_details.aspx?ObjectId=0900001680abccc9

[4] Տե՛ս, օրինակ, https://ombuds.am/am/site/ViewNews/3063 հղումը:

[5] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3065 հղումով:

մանրամասն անդրադարձ է կատարվել հոդվածի 5-րդ պարագրաֆում), որն իր հերթական նիստի շրջանակում քննարկման առարկա է դարձրել «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծը: Խորհրդի անդամների կողմից ներկայացվել են դիտարկումներ և առաջարկություններ նախագծով ամրագրված կարգավորումների վերաբերյալ: Վերջիններս ամփոփվել են մեկ համահավաք փաստաթղթում[1] և ներկայացվել իրավասու պետական մարմնին՝ նախագծում համապատասխան լրամշակման աշխատանքներ կատարելու նպատակով:

Հարկ է նշել նաև, որ վկայակոչված օրենքի նախագծի առնչությամբ համատեղ կարծիք են ներկայացրել Վենետիկի հանձնաժողովը և ԵԽ ժողովրդավարության և մարդկային արժանապատվության հարցերով տնօրինությունը (DGII)[2]: Համատեղ կարծիքում ամփոփված են նախագծի կարգավորումների առնչությամբ վերջիններիս դիտարկումներն ու առաջարկությունները:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ առաջնահերթ ենք համարում ոլորտին առնչվող համապարփակ օրենսդրության շուտափույթ ընդունումն ու պատշաճ գործարկումը՝ ամրագրելով հստակ և որոշակի կարգավորումներ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավական կարգավիճակի, նրանց նկատմամբ խտրականության արգելքի բովանդակության վերաբերյալ:

Կարևոր ենք համարում նաև Հայաստանի Հանրապետությունում պատշաճ քայլերի ձեռնարկումն՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ու խթանման վերաբերյալ հայեցակարգ, ռազմավարություն և դրանից բխող գործողությունների ծրագիր մշակելու ուղղությամբ՝ հստակ անդրադարձ կատարելով հակախտրականության ոլորտին առնչվող հարցերին:

3. Ազգային փոքրամասնությունների իրավունքների խթանումը՝ որպես վերջիններիս իրավունքների երաշխավորման կարևորագույն գրավական

Իրավահավասարության ապահովման, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանության պատշաճ համակարգ ունենալու տեսանկյունից բացառիկ կարևորություն ունի մարդու իրավունքների խթանումը:

[1] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3104 հղումով:

[2] Տե՛ս Joint Opinion on the Draft Law on National Minorities, Venice Commission and DGII, 2024, https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2024)019-e

Իրավունքների խթանումը ենթադրում է հավասար հնարավորությունների ապահովում, ինչպես նաև հատուկ միջոցների ձեռնարկում և իրացում համապատասխան ոլորտներում[1]: Քննարկվող ոլորտի համատեքստում ասվածը ենթադրում է պետության կողմից ազգային փոքրամասնությունների ինքնության պահպանման տարրերի, մասնավորապես՝ լեզվի, կրոնի, մշակույթի, ավանդույթների պահպանմանն ու զարգացմանը, ինչպես նաև հասարակական կյանքում արդյունավետ մասնակցության ապահովմանն ուղղված պատշաճ մեթոդաբանության և կառուցակարգերի մշակում ու իրացում, ինչպես նաև երկարաժամկետ և շարունակական գործողությունների իրականացում՝ կարճատև կամ դրվագային լուծումների փոխարեն:

Մարդու իրավունքների խթանումը, ի թիվս այլնի, ներառում է մարդու իրավունքների մասին իրազեկվածության բարձրացումը, ուսուցումը և վերապատրաստումը հանրության բոլոր շրջաններում, ինչպես նաև այնպիսի մեթոդաբանության և նյութերի մշակումը, որոնք կարող են ամրապնդել իրավունքի խթանման ուղղությամբ տարվող աշխատանքները[2]:

Ըստ ՄԱԿ Մարդու իրավունքների ազգային հաստատությունների գլոբալ դաշինքի հավատարմագրման ենթահանձնաժողովի ընդհանուր դիտարկումների[3]՝ խթանումը ընդգրկում է այն գործառույթները, որոնց նպատակն է ստեղծել այնպիսի հասարակություն, որտեղ մարդու իրավունքները լայն շրջանակներում հասկացված են և հարգված: Նման գործառույթները կարող են ներառել կրթությունը, վերապատրաստումը, խորհրդատվությունը, հանրային իրազեկումն ու շահերի պաշտպանությունը:

Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների իրավունքների երաշխավորման համակարգը առավել շատ կենտրոնացած է իրավունքների պաշտպանության մեխանիզմների վրա: Մինչդեռ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը միտված քաղաքականության մշակումից և իրացումից զատ խիստ կարևորվում է նաև

[1] Տե՛ս Office of the High Commissioner for Human Rights, *Note on the Sixth Session of the Working Group on Minorities of the Sub-Commission on the Promotion and Protection of Human Rights* 22-26 May 2000.

[2] Տե՛ս Promoting Human Rights at Local and Regional Level, Council of Europe, 2016, https://rm.coe.int/168071b33b

[3] Տե՛ս General Observations of the Sub-Committee on Accreditation, Global Alliance of National Human Rights Institutions (GANHRI), 2018, https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Countries/NHRI/GANHRI/EN_GeneralObservations_Revisions_adopted_21.02.2018_vf.pdf

նշված ոլորտում իրավունքների խթանման ուղղությամբ պատշաճ կառուցակարգերի առկայությունն ու գործադրումը:

Հարկ է նկատի ունենալ, որ նշված ոլորտի առնչությամբ պետության պարտավորությունը չի կարող ունենալ այնպիսի նեղ մեկնաբանություն, որ ենթադրի բացառապես պետության պասիվ քաղաքականությունը իրավունքների իրացմանը չմիջամտելու ձևաչափով: Այս իրավունքը ենթադրում է նաև պետության պարտավորությունը՝ ստեղծելու նպաստավոր պայմաններ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ինքնության հիմնական տարրերը պահպանելու և զարգացնելու համար:

Ասվածը ենթադրում է նշված ոլորտում պետության կողմից ակտիվ և խթանող քաղաքականության իրականացում՝ առաջ եկող խնդիրներին արձագանքելու կամ նշված իրավունքի իրացմանը չխոչընդոտելու պարզ քաղաքականության փոխարեն:

Ստորև կներկայացվեն ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների իրավունքների խթանմանն առնչվող խնդիրներ՝ ազգային փոքրամասնությունների առանձին իրավունքների համատեքստում:

3.1. ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների լեզվի պահպանմանն ու կրթության իրավունքին առնչվող խնդիրները իրավունքների խթանման համատեքստում

Տարբեր երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, ազգային փոքրամասնությունների իրավունքների երաշխավորման համատեքստում բազմաթիվ են կրթության համակարգին և լեզվի պահպանմանն առնչվող խնդիրները, որոնք բացասաբար են անդրադառնում նշված ոլորտում իրավունքների երաշխավորման համակարգի վրա:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների տեսանկյունից խիստ կարևորվում է իրենց լեզուն ուսումնասիրելու կամ այդ լեզվով կրթություն ստանալու հնարավորությունը: Հարկ է նկատի ունենալ, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց լեզվի պահպանումն էական նշանակություն ունի վերջիններիս ինքնության պահպանման հարցում, և այս բնագավառում առկա խնդիրները կարող են հանգեցնել ինքնության պահպանմանը վերաբերելի խնդրահարույց իրավիճակների:

Ազգային փոքրամասնությունների՝ իրենց լեզուն ուսումնասիրելու կամ այդ լեզվով կրթություն ստանալու հնարավորության տեսանկյունից բացառիկ կարևորություն ունեն կրթական հաստատություններում համապատասխան

լեզուների պատշաճ դասավանդումը, ազգային փոքրամասնությունների լեզուներ (այդ լեզուներով) դասավանդող մասնագետների պատրաստումն ու առկայությունը և այլն: Նշված կառուցակարգերի բացակայությունը կամ ոչ բավարար լինելը վերջնարդյունքում կարող են հանգեցնել իրավունքների խախտման կամ սահմանափակման տարբեր դրսևորումների:

Ստորև կներկայացնենք քննարկվող ոլորտում Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող առանձին խնդիրներ՝ վերը թվարկված կառուցակարգերի բացակայության կամ ոչ բավարար լինելու համատեքստում:

Այսպես, ՀՀ-ում բացակայում են ազգային փոքրամասնությունների լեզուներ (այդ լեզուներով) դասավանդող մասնագետներ կրթելու համար նախատեսված ուսումնական հաստատությունները կամ դրանց համապատասխան կառուցվածքային միավորները: Նշվածը հանգեցնում է ոլորտի մասնագետների սակավության կամ առհասարակ բացակայության: Ավելին՝ նշված լեզուների մասնագետների բացակայության կամ սակավության պատճառով ազգային փոքրամասնությունների լեզուներ (այդ լեզուներով) դասավանդող ուսուցիչների համար համապատասխան վերապատրաստումներ, ըստ էության, տարիներ շարունակ չեն իրականացվում:

Ասվածին զուգահեռ, դեռևս 2010 թվականին կրթական ոլորտի բարեփոխումների արդյունքում ՀՀ օրենսդրությամբ ուսուցիչների համար սահմանվել է բարձրագույն կրթության պահանջ, որի իրացման նպատակով այդ չափանիշին չբավարարող ուսուցիչներին տրվել է որոշակի ժամանակահատված՝ ստանալու բարձրագույն կրթություն: Նշված ժամանակահատվածում շատ ուսուցիչներ ստացել են բարձրագույն կրթություն: Իսկ ոչ բարձրագույն կրթությամբ մասնագետներին տրվել է հավելյալ հնարավորություն՝ կամավոր ատեստավորման մասնակցության արդյունքում համապատասխան շեմը հաղթահարելու դեպքում շարունակելու աշխատանքը:

Քանի որ ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների լեզուներ (այդ լեզուներով) դասավանդող մասնագետները մեծամասամբ ունեն միջին մասնագիտական կրթություն, իսկ բարձրագույն ուսումնական հաստատությունները կամ համապատասխան կառուցվածքային միավորները բացակայում են, ուստի վերջիններիս մեծ մասը մասնակցել են կամավոր ատեստավորմանը՝ աշխատանքը շարունակելու նպատակով: Ատեստավորման անցողիկ շեմը չհաղթահարելու արդյունքում նշված ուսուցիչների մի մասը կանգնել է աշխատանքից ազատվելու վտանգի առաջ այն պարագայում, երբ

վերջիններս, որպես կանոն, ուսումնական հաստատություններում ազգային փոքրամասնությունների լեզուներ դասավանդող միակ ուսուցիչներն են եղել:

Նշված խնդիրները հանգեցնում են մի շարք իրավունքների, այդ թվում՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ իրենց լեզուն, ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքների խախտման, քանի որ տվյալ ուսուցիչների՝ աշխատանքից ազատվելու պարագայում՝ ազգային փոքրամասնության ներկայացուցիչները զրկվում են իրենց լեզուն ուսումնասիրելու կամ առհասարակ իրենց լեզվով կրթություն ստանալու հնարավորությունից:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 56-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունք: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք:

Շրջանակային կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ Կողմերը անհրաժեշտության դեպքում կրթության և գիտական ուսումնասիրությունների բնագավառում պետք է միջոցներ ձեռնարկեն իրենց ազգային փոքրամասնությունների և բնակչության մեծամասնության մշակույթի, պատմության, լեզվի և կրոնի վերաբերյալ գիտելիքներն ամրապնդելու համար: Այս ենթատեքստում Կողմերը, մասնավորապես, պետք է համարժեք հնարավորություններ տրամադրեն ուսուցիչների պատրաստման, դպրոցական դասագրքերով ապահովման համար և դյուրացնեն շփումները տարբեր համայնքների ուսանողների և ուսուցիչների միջև: Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար բոլոր մակարդակներով ապահովել կրթության մատչելիության հավասար հնարավորություններ:

Նույն կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն՝ Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը՝ սովորել իր փոքրամասնության լեզուն: Ավանդաբար կամ զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված տարածքներում բավարար կարիքի դեպքում Կողմերը հնարավորությունների սահմաններում և իրենց կրթական համակարգերի շրջանակներում պետք է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար երաշխավորեն իրենց լեզուն ուսումնասիրելու կամ այդ լեզվով կրթություն ստանալու համարժեք հնարավորություններ: Միևնույն ժամանակ,

նշված պարտավորությունները չպետք է իրագործվեն՝ ի վնաս պաշտոնական լեզվի ուսուցման և դասավանդման:

ԵԽ նախարարների կոմիտեն Հայաստանի կողմից Շրջանակային կոնվենցիայի իրականացման վերաբերյալ 2023 թվականի հունիսի 28-ի բանաձևում[1] ներկայացրել է լրացուցիչ առաջարկություններ, այն է՝ ընդլայնել փոքրամասնությունների լեզուներով, մասնավորապես ասորերենով ուսուցման առաջարկը, դրան աջակցելու համար ապահովել ուսուցիչների համապատասխան վերապատրաստումը և նորացված ուսումնական նյութերի առկայությունը, աջակցել ազգային փոքրամասնությունների կազմակերպություններին կիրակնօրյա դպրոցներ և փոքրամասնությունների լեզուներով նախադպրոցական նախաձեռնություններ առաջարկելու հարցում, ձեռնարկել քայլեր՝ ընդլայնելու եզդիերենով ուսուցման առաջարկը ընդհանուր ուսումնական ծրագրի հիմնական և միջնակարգ մակարդակներում, այդ թվում՝ ուսուցիչների վերապատրաստման և ֆինանսական խթանների միջոցով, որպեսզի եզդի աշակերտները վերապատրաստվեն և աշխատեն որպես ուսուցիչներ: Միևնույն ժամանակ, իշխանությունները պետք է ներդնեն եզդիերենով հետագա կրթություն (մասնագիտական, մեծահասակների համար նախատեսված և շարունակական):

Վերը շարադրված իրավական կարգավորումներից բխում է, որ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է ճանաչել ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը՝ սովորել իր փոքրամասնության լեզուն, բոլոր մակարդակներում ապահովել կրթության մատչելիության հավասար հնարավորություններ, տրամադրել համարժեք հնարավորություններ ուսուցիչների պատրաստման, դպրոցական դասագրքերով ապահովման համար և դյուրացնել շփումները տարբեր համայնքների ուսանողների և ուսուցիչների միջև:

Միաժամանակ, նշված պարտավորությունները չպետք է կրեն հռչակագրային բնույթ, և պետությունը պետք է ստեղծի պատշաճ կառուցակարգեր՝ վերոնշյալ իրավունքների իրացման համար:

Հարկ է արձանագրել, որ ՀՀ-ում, հատկապես վերջին տարիներին, իրականացվում են քայլեր՝ ոլորտի բարեփոխման, ազգային փոքրամաս-

[1] Տե՛ս Resolution on the implementation of the Framework Convention for the Protection of National Minorities by Armenia, Committee of Ministers, 2023, https://search.coe.int/cm/pages/result_details.aspx?ObjectId=0900001680abccc9

նությունների իրավունքների խթանման ուղղությամբ, սակայն դրանք բավարար չեն ոլորտին առնչվող միջազգային չափանիշների տեսանկյունից:

Մասնավորապես, բարձրագույն ուսումնական հաստատություններ կամ համապատասխան կառուցվածքային միավորներ ստեղծելու, ոլորտի մասնագետների սակավության խնդիրները լուծելու, ուսուցիչների համար վերապատրաստումներ կազմակերպելու ուղղությամբ ձեռնարկվում են առանձին քայլեր, որոնք, միանշանակ, ողջունելի են, սակայն դրանք հնարավոր չէ բավարար համարել: Վերջիններս պետք է շատ ավելի մեծ ծավալ ունենան, լինեն համակողմանի և իրականացվեն հնարավորինս արագ, քանի որ նշված և նմանատիպ այլ խնդիրներն ու դրանց հաղթահարման ուղղությամբ պատշաճ քայլերի անբավարար լինելը կարող են հանգեցնել մի շարք իրավունքների, այդ թվում՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ իրենց լեզուն, ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքների խախտման:

Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ անհրաժեշտ է նախևառաջ ձեռնամուխ լինել հայեցակարգային լուծումների մշակմանն ու իրացմանը, մասնավորապես՝ մշակել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման վերաբերյալ հայեցակարգ, ռազմավարություն և դրանից բխող գործողությունների ծրագիր՝ նախատեսելով կոնկրետ և թիրախային գործողություններ՝ ուղղված կադրային ապահովման խնդիրների լուծմանը, այդ թվում՝ նշված ոլորտում բարձրագույն կրթությունը ապահովելու, բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան կառուցվածքային միավորներ ձևավորելու, ոլորտի մասնագետներ կրթելու և վերապատրաստելու ուղղությամբ:

Ազգային փոքրամասնությունների լեզվի պահպանման իրավունքի տեսանկյունից կարևոր դերակատարություն ունեն նաև ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռուստառադիոհաղորդումները:

Դրանք ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար հարթակ են՝ իրենց լեզվով հաղորդակցվելու, իրենց մշակույթը, ավանդույթները և խնդիրները լսելու և տեսնելու համար:

Այս առումով հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով ամրագրված են կարգավորումներ, համաձայն որոնց՝ հանրային հեռարձակողները պարտավոր են սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնցում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության տարբեր տարա-

ծաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը, Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների կյանքի և մշակույթի մասին հաղորդումներ հեռարձակելու նպատակով ոչ գիշերային ժամերին ազգային փոքրամասնությունների համար շաբաթական նվազագույնը 30 րոպե Հանրային տեսալսողական հեռարձակողների և 2 ժամ Հանրային լսողական հեռարձակողի եթերով տրամադրել եթերային ժամանակ:

Ի կատարումն վկայակոչված կարգավորումների՝ Հայաստանի հանրային ռադիոյի կողմից յուրաքանչյուր օր հաղորդումներ են ներկայացվում եզդիերեն, քրդերեն, ասորերեն և հունարեն: Հաղորդումները հեռարձակվում են ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ Հայաստանից դուրս և միտված են էթնիկ բազմազանության և ազգային փոքրամասնությունների մշակույթի տեղեկացվածության բարձրացմանը՝ ապահովելով վերոնշյալ ազգային փոքրամասնությունների՝ սեփական լեզվով տեղեկացվածությունը Հայաստանում կատարվող իրադարձությունների մասին:

Բացի յուրաքանչյուր լեզվով տրվող ամենօրյա լրատվությունից, հանրային ռադիոյի եթերում ինչող փոքրամասնությունների հաղորդումներում մաս է հատկացվում նաև յուրաքանչյուրի մշակույթի, ավանդույթների, պատմության, կրոնի, լեզվի մասին տեղեկատվության ներառմանը:

Հանրային ռադիոյում յուրաքանչյուր ազգային փոքրամասնություն ունի նաև իր լեզվով հրապարակվող պաշտոնական կայքէջ, որտեղ հրապարակվում է հայերենից թարգմանված օրվա լրատվությունը, ներկայացվում են ռեպորտաժներ, տեսանյութեր, հարցազրույցներ ազգային փոքրամասնությունները ներկայացնող ականավոր գործիչների հետ[1]:

Չնայած վերոնշյալին՝ Փորձագետների կոմիտեն Հայաստանի կողմից Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կիրառման վերաբերյալ 2021 թվականի հոկտեմբերի 1-ի զեկույցում[2] առաջարկել է ապահովել հանրային հեռուստատեսությամբ ասորերենով, հունարենով, քրդերենով, եզդիերենով կանոնավոր և բավականաչափ երկարաժամկետ հեռարձակումը:

[1] Տե՛ս Շրջանակային կոնվենցիայի կատարման վերաբերյալ ՀՀ վեցերորդ շրջանի ազգային զեկույցը, https://rm.coe.int/6th-sr-armenia-am/1680b19fb4

[2] Տե՛ս Evaluation by the Committee of Experts of the Implementation of the Recommendations for Immediate Action contained in the Committee of Experts' fifth evaluation report on Armenia, https://rm.coe.int/min-lang-2021-17-evalria5-armenia-en/1680a44d26

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են քայլեր ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման ապահովման տեսանկյունից, *մինչդեռ կարևոր առաջընթաց կարող է լինել նշված հաղորդումների համար առավել երկար ժամանակահատված նախատեսելը և հաղորդումների քանակն ավելացնելը: Նման քաղաքականությունը կարող է նպաստել ազգային փոքրամասնությունների լեզվի պահպանմանն ու կատարելագործմանը, միջմշակութային հաղորդակցության խթանմանը և այլն*:

3.2. Ազգային փոքրամասնության լեզվով տեղագրական նշումները՝ որպես վերջիններիս իրավունքների խթանման կարևոր բաղադրիչ

Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման համատեքստում կարևոր նշանակություն ունի նաև ավանդական տեղական անվանումների, փողոցների անվանումների, ինչպես նաև բնակչության համար նախատեսված տեղագրական այլ նշումների՝ փոքրամասնության լեզվով ցուցանակների տեղադրումը:

Ազգային փոքրամասնության լեզվով ցուցանակների տեղադրումը փոքրամասնության լեզուն հանրային տիրույթում տեսանելի դարձնելու միջոցներից է և որոշ չափով ծառայում է փոքրամասնության լեզուն որպես տեղական լեզվական տարածքի մաս ճանաչելուն: Այն նպաստում է, որ փոքրամասնությունների լեզուն դուրս գա որոշակի խմբի օգտագործման շրջանակներից և դառնա հանրային տիրույթի մի մասը: Սա շատ կարևոր միջոց է փոքրամասնության լեզուն որպես որոշակի խմբի հաղորդակցության միջոց պահպանելու և ճանաչելու միտումը հաղթահարելու տեսանկյունից այն դեպքում, երբ հանրային, պաշտոնական հաղորդակցությունը բնակչության մեծամասնության լեզվով է[1]:

Համապատասխան լեզվով տեղագրական նշանները ցույց են տալիս և ճանաչում են տվյալ տարածքում փոքրամասնության առկայությունը և դրա հետ ավանդական կապերը:

Շրջանակային կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտեն ակտիվորեն խթանում է երկլեզու նշանների կիրառումը նաև այն պատճառով, որ դա

[1] Տե՛ս նույն տեղում:

փոխանցում է այն զգացողությունը, որ տվյալ տարածքը ներդաշնակորեն օգտագործվում է բնակչության տարբեր խմբերի կողմից[1]:

Այսպես, Շրջանակային կոնվենցիայի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ազգային փոքրամասնության պատկանող անձանց զգալի թվաքանակով ավանդաբար բնակեցված տարածքներում Կողմերը իրենց իրավական համակարգերի, անհրաժեշտության դեպքում՝ ներառյալ նաև այլ պետությունների հետ կնքված համաձայնագրերի շրջանակներում, ինչպես նաև հաշվի առնելով կոնկրետ պայմանները, պետք է ապահովեն ավանդական տեղական անվանումների, փողոցների անվանումների, ինչպես նաև բնակչության համար նախատեսված տեղագրական այլ նշումների, փոքրամասնության լեզվով ցուցանակների տեղադրումը, երբ այդպիսի նշումների բավարար կարիք կա:

Օրինակ՝ ՀՀ որոշ բնակավայրերում վերջիններիս անվանումների ցուցանակները տեղադրված են և՛ հայերեն, և՛ ռուսերեն լեզուներով: Առանձին բնակավայրերի մուտքերի մոտ տեղադրված են նաև այլ ազգային փոքրամասնությունների լեզուներով տեղագրական ցուցանակներ[2]: Սակայն մի շարք այլ համայնքներում, որոնք բնակեցված են նաև ազգային փոքրամասնությանը պատկանող անձանցով, համապատասխան լեզուներով ցուցանակներ տեղադրված չեն:

Կարևոր է որոշ բնակավայրերում համապատասխան լեզվով ցուցանակների առկայությունը, ինչը վկայում է, որ պետության կողմից ձեռնարկվել են որոշակի քայլեր՝ համապատասխան տարածքներում փոքրամասնության առկայությունը և նրանց հետ ավանդական կապերը ճանաչելու, փոքրամասնության լեզուն հանրային տիրույթում տեսանելի դարձնելու տեսանկյունից՝ ըստ այդմ նպաստելով նաև տվյալ տարածքում բնակչության տարբեր խմբերի ներդաշնակ գոյությանը:

Նկատի ունենալով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ նման խթանող գործողություններն ու միջոցառումները պետք է կրեն համընդհանուր բնույթ, կիրառելի լինեն ազգային փոքրամասնություններով բնակեցված բոլոր բնակավայրերի համար՝ հիմք ընդունելով և առաջնորդվելով ոլորտում գոյություն ունեցող բոլոր միջազգային չափանիշներով, ինչպես նաև ազգային

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս Fifth Report submitted by Armenia, Advisory Committee on the Framework Convention for the Protection of National Minorities, 2020, https://rm.coe.int/5th-sr-armenia-en/16809eb7b3

փոքրամասնության ներկայացուցիչների՝ համապատասխան գործընթացներում ներառականությունն ապահովելով:

3.3. Ազգային փոքրամասնությունների վերաբերյալ տեղեկատվության ներառումը ուսումնական նյութերում՝ որպես տեղեկացված, հանդուրժող և համերաշխ հասարակության ձևավորման կարևորագույն նախապայման

Ուսումնական ծրագրերը և ուսումնական նյութերը առանցքային դեր են խաղում ազգային փոքրամասնությունների մասին իրազեկվածության բարձրացման գործում: Դրանք հասարակության ներկայացուցիչներին թույլ են տալիս ձեռք բերել համապատասխան գիտելիքներ և կարողություններ, որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում ակտիվ մասնակցության և ներառականության տեսանկյունից: Ասվածի հաշվառմամբ՝ ուսումնական նյութերը պետք է ուղղված լինեն բազմազանությունը գնահատելուն, տարբերությունների նկատմամբ հարգանք սերմանելուն և վերլուծական ու քննադատական մտածողության հմտություններ զարգացնելուն[1]:

Ուսումնական ծրագրերում և նյութերում ազգային փոքրամասնությունների վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը նպաստում է հասարակական կյանքում նրանց անտեսանելիությանը, հատկապես այն իրավիճակներում, երբ նրանց թվաքանակը քիչ է, և խնդիրները, որոնց նրանք բախվում են, շատ տեղ չեն զբաղեցնում հանրային դիսկուրսում[2]:

Շրջանակային կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտեի կարծիքով՝ ուսումնական ծրագրերը և նյութերը պետք է հաշվի առնեն նաև փոքրամասնության համայնքների բազմազանությունը[3] և մշակվեն այդ համայնքների ներկայացուցիչների ակտիվ մասնակցությամբ՝ ներառականությունն ապահովելով[4]: Այն օգնում է խուսափել ազգային փոքրամասնությունների մասին բացասական կարծրատիպերից և կեղծ պատկերացումներից[5]՝ միաժամանակ

[1] Տե՛ս Thematic Commentary No. 3, Advisory Committee on the Framework Convention for the Protection of National Minorities, 2012, https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016800c108d

[2] Տե՛ս Second Opinion on Bosnia and Herzegovina, ACFC, https://rm.coe.int/168008c15a

[3] Տե՛ս First Opinion on Georgia; Third Opinion on the Russian Federation, ACFC.

[4] Տե՛ս ACFC Thematic Commentary No. 2; Fourth Opinion on Ukraine.

[5] Տե՛ս Fourth Opinion on Portugal; Fifth Opinion on Albania, ACFC.

պայքարելով նախապաշարմունքների, մակերեսային կամ չափազանց պարզեցված պատկերների, խտրական միջավայրի դեմ[1]:

Փոքրամասնությունների մշակույթը, պատմությունը, լեզուները, կրոնը և առհասարակ ինքնության տարրերը պետք է ներկայացվեն առավել լայն սպեկտրով, օրինակ՝ գրականության, արվեստի, բնական գիտությունների և աշխարհագրության շրջանակներում, և կրթության բոլոր մակարդակներում[2]: Այն պետք է ներառի գիտելիքների փոխանցում մշակութային ավանդույթների, անհատների և համայնքների միջև հարաբերությունների պատմության վերաբերյալ, ինչպես նաև այն, թե ինչպես է յուրաքանչյուրը նպաստել մյուսների զարգացմանը, աճին և ստեղծագործականությանը: Նման մոտեցումը բարձրացնում է նաև հասարակության իրազեկվածությունը ազգային փոքրամասնությունների, նրանց ինքնության տարրերի մասին[3]:

Կրթության համակարգում ազգային փոքրամասնությունների մշակույթների, պատմության և լեզուների վերաբերյալ նյութերի ներառումը կարող է նաև նվազեցնել ազգային փոքրամասնություններին պատկանող աշակերտների՝ պարտադիր կրթությունից դուրս մնալու և բացակայելու ռիսկը, ինչպես նաև բարելավել նրանց կրթական արդյունքները[4]:

Գտնում ենք, որ Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների, ինչպես նաև վերջիններիս իրավունքների վերաբերյալ շատ քիչ տեղեկություն է առկա դպրոցական դասագրքերում և այլ ուսումնական նյութերում: Երբեմն երկրի բնակչության մեծամասնությունը չունի բավարար գիտելիքներ և տեղեկատվություն ազգային փոքրամասնությունների, նրանց իրավունքների, ինքնության տարրերի՝ լեզվի, կրոնի, մշակույթի և ավանդույթների վերաբերյալ:

Այս առումով Շրջանակային կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտեն Հայաստանի վերաբերյալ 5-րդ կարծիքում[5] ևս նշել է, որ դպրոցական ուսումնական ծրագրերում ազգային փոքրամասնությունների վերաբերյալ շատ քիչ

[1] Տե՛ս Fourth Opinion on Slovakia; Fourth Opinion on Ukraine; Fifth Opinion on Romania; Fifth Opinion on Slovenia.

[2] Տե՛ս Fifth Opinion on Albania, ACFC.

[3] Տե՛ս Recommendation CM/Rec(2011)6 of the Committee of Ministers to member States on intercultural dialogue and the image of the other in history teaching and Recommendation CM/Rec(2020)2 of the Committee of Ministers to member States on the inclusion of the history of Roma and/or Travellers in school curricula and teaching materials.

[4] Տե՛ս Thematic Commentary No. 1 of Framework Convention, https://rm.coe.int/prems-104224-gbr-2568-framework-convention-thematic-commentary-no1-a4-/1680b1ff31

[5] Տե՛ս Fifth Opinion on Armenia, ACFC, https://rm.coe.int/5th-op-armenia-en/1680aa2a81

տեղեկություններ կան, և միջմշակութային կրթության միակ հնարավորությունը փոքրամասնությունների հետ միասին դասերին հաճախելն է: Ուսումնական ծրագրերում ազգային փոքրամասնությունների ներկայության ապահովումը կխթանի պատկանելության ավելի մեծ զգացում և կդառնա հանրակրթությունից դուրս մնալու դեպքերի նվազեցման ռազմավարության մի մասը:

Խորհրդատվական կոմիտեն հորդորել է Հայաստանի իշխանություններին ապահովել ազգային փոքրամասնությունների մշակույթի, ավանդույթների, պատմության, կրոնի և լեզվի ու հասարակության կյանքում նրանց ունեցած ներդրումների մասին տեղեկատվության ներառումը դպրոցական ծրագրերում և ուսուցիչների վերապատրաստման ու ուսումնական հարակից նյութերում:

Իր հերթին՝ ԵՄ նախարարների կոմիտեն Հայաստանի կողմից Շրջանակային կոնվենցիայի իրականացման վերաբերյալ 2023 թվականի հունիսի 28-ի բանաձևում[1] որպես անհապաղ իրականացվող գործողություն առաջարկել է ապահովել, որ ազգային փոքրամասնությունների մշակույթի, ավանդույթների, պատմության, կրոնի և լեզվի և հասարակության մեջ նրանց ներդրման մասին տեղեկատվությունը ներառվի դպրոցական ուսումնական ծրագրերում և ուղեկցող՝ ուսուցիչների համար նախատեսված վերապատրաստման և ուսումնական նյութերում:

Այս առումով հարկ է արձանագրել վերջին տարիներին Հայաստանում տեղի ունեցած դրական փոփոխությունները՝ ուսումնական նյութերում ազգային փոքրամասնությունների վերաբերյալ տեղեկատվություն ներառելու առումով: Օրինակ՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում «Ես և իմ հայրենիքը» առարկայի շրջանակներում ներառված է որոշակի տեղեկատվություն ազգային փոքրամասնությունների պատմության, լեզվի և մշակույթի վերաբերյալ:

Կարևոր համարելով վերը նշված ոլորտում պետության կողմից ձեռնարկված դրական քայլերը՝ այնուամենայնիվ, գտնում ենք, որ դրանք չեն կարող բավարար լինել վերը նշված միջազգային փաստաթղթերում տեղ գտած չափանիշների, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների, նրանց ինքնության տարրերի վերաբերյալ առավել ամբողջական և համապարփակ տեղեկատվություն և գիտելիքներ փոխանցելու տեսանկյունից:

[1] Տե՛ս Resolution on the implementation of the Framework Convention for the Protection of National Minorities by Armenia, Committee of Ministers, 2023, https://search.coe.int/cm/pages/result_details.aspx?ObjectId=0900001680abccc9

Հետևաբար, անհրաժեշտ է պատշաճ և բավարար քայլեր ձեռնարկել դպրոցական դասագրքերում և այլ ուսումնական նյութերում ազգային փոքրամասնությունների վերաբերյալ առավել ամբողջական տեղեկատվություն ներառելու ուղղությամբ, ինչը կնպաստի ազգային փոքրամասնությունների ինքնության ճանաչմանը, պահպանմանն ու զարգացմանը, խտրական դրսևորումների վերացմանը, ինչպես նաև կստեղծի առավել համերաշխ, հանդուրժող և տեղեկացված հասարակություն՝ սերմանելով հարգանք մշակութային բազմազանության նկատմամբ:

4. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մշակութային ինքնության պահպանումը՝ իրավունքների խթանման համատեքստում

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման, ինչպես նաև ինքնության պահպանման հարցում իր ուրույն տեղն ունի վերջիններիս մշակույթը:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 27-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի հասարակության մշակութային կյանքին մասնակցելու, արվեստից բավականություն ստանալու, գիտական առաջընթացին մասնակցելու և նրա բարիքներից օգտվելու իրավունք:

Ասվածից բխում է, որ մշակութային իրավունքները վերաբերում են հասարակության բոլոր անդամներին և գեղարվեստական, մտավոր և գիտական ոլորտների բոլոր աշխատողներին: Դրանք անհատներին, խմբերին, ժողովուրդներին հնարավորություն են տալիս արտահայտել, պահպանել, զարգացնել իրենց մշակութային առանձնահատկությունները[1]:

Թեպետ ազգային փոքրամասնությունները ապրում են հասարակության մեջ և կազմում դրա մի մասը, նպաստում վերջինիս ընդհանուր մշակույթի

[1] Տե՛ս Protection and Promotion of the Cultural Rights of Persons belonging to Minorities within UNESCO's Fields of Competence,
https://unesdoc.unesco.org/in/documentViewer.xhtml?v=2.1.196&id=p::usmarcdef_0000096922&file=/in/rest/annotationSVC/DownloadWatermarkedAttachment/attach_import_1c05a2a7-ccda-49b5-8433-a20fe2a65e69%3F_%3D096922engo.pdf&locale=en&multi=true&ark=/ark:/48223/pf0000096922/PDF/096922engo.pdf#%5B%7B%22num%22%3A483%2C%22gen%22%3A0%7D%2C%7B%22name%22%3A%22XYZ%22%7D%2Cnull%2Cnull%2C0%5D

զարգացմանը, սակայն նրանք խնդիր ունեն պահպանելու իրենց բնորոշ հատկանիշները, ինքնությունը, այդ թվում՝ մշակույթը[1]:

Ազգային փոքրամասնությունների մշակութային իրավունքների կարևորությունը դրսևորվում է իրենց ինքնության պահպանման, մշակութային ժառանգության, ավանդույթների և լեզուների պահպանման, միջմշակութային երկխոսության զարգացման և այլնի տեսանկյունից: Դրանք փոխկապակցված են նաև մարդու այլ իրավունքների հետ, ինչպիսիք են խոսքի, կրոնի ազատությունը, խտրականության բացառումը, կրթության իրավունքը և այլն:

Ազգային փոքրամասնությունների մշակութային իրավունքների պատշաճ երաշխավորման տեսանկյունից էական նշանակություն ունի դրանց իրացման համար անհրաժեշտ և բավարար պայմանների ապահովումը:

Այս առումով հարկ է վկայակոչել Շրջանակային կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ Կողմերը պարտավորվում են նպաստել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք նրանց անհրաժեշտ են իրենց մշակույթը պահպանելու և զարգացնելու, ինչպես նաև ինքնության հիմնական տարրերը՝ կրոնը, լեզուն, ավանդույթները և մշակութային ժառանգությունը պահպանելու համար:

Ոլորտային օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենքի 8-րդ հոդվածով ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունն աջակցում է իր տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանմանն ու զարգացմանը, պետական ծրագրերի իրականացման միջոցով նպաստում է նրանց կրոնի, ավանդույթների, լեզվի, մշակութային ժառանգության, մշակույթի պահպանման, տարածման և զարգացման համար պայմանների ստեղծմանը:

Վերոգրյալից բխում է, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք: Նշված իրավունքի առնչությամբ պետության պարտավորությունը չի կարող ունենալ այնպիսի նեղ մեկնաբանություն, որ ենթադրի բացառապես պետության պասիվ քաղաքականությունը իրավունքների իրացմանը չմիջամտելու ձևաչափով:

[1] Տե՛ս Dieter Kugelmann, “The Protection of Minorities and Indigenous People Respecting Cultural Diversity”, Max Planck, Yearbook of United Nations Law, Volume 11, 2007, pages 233-263, https://www.mpil.de/files/pdf1/mpunyb_06_kugelmann_11.pdf

Հարկ է նկատի ունենալ, որ այս իրավունքը ենթադրում է նաև պետության պարտավորությունը՝ ստեղծելու նպաստավոր պայմաններ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ինքնության հիմնական տարրերը, այդ թվում՝ մշակույթը պահպանելու և զարգացնելու համար:

Ասվածը ենթադրում է նշված ոլորտում պետության կողմից ակտիվ և խթանող քաղաքականության իրականացում՝ առաջ եկող խնդիրներին արձագանքելու կամ նշված իրավունքի իրացմանը չխոչընդոտելու պարզ քաղաքականության փոխարեն:

Հայաստանում իրականացվում են առանձին մշակութային միջոցառումներ ազգային փոքրամասնությունների մշակութային իրավունքների պաշտպանության և խթանման համատեքստում: Օրինակ՝ մի քանի տարի շարունակ կազմակերպվում է «Տանիքը՝ Հայաստան» խորագրով համերգը՝ ազգային փոքրամասնությունների մասնակցությամբ: Վերջինիս նպատակն է ազգային փոքրամասնությունների ազգային երգի, պարի, ուտեստների, ավանդական սպորտաձևերի և այլնի ներկայացումը: Կազմակերպվում և անցկացվում են նաև ազգային փոքրամասնությունների երաժշտական փառատոներ, համերգներ և ցուցահանդեսներ:

Որպես ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանման բաղադրիչ՝ կարևոր դերակատարություն ունեն նաև զանգվածային լրատվության միջոցները:

Վերջիններս կարևոր դեր են խաղում հասարակության մեջ նոր մշակույթների տարածման գործում՝ տարբեր ձևաչափերով: Օրինակ՝ զանգվածային լրատվության միջոցները կարող են ներկայացնել փոքրամասնությունների մշակույթներին վերաբերող տեղեկատվություն, որը թույլ է տալիս հասարակությանը ծանոթանալ տարբեր մշակույթներին և ավանդույթներին՝ դրանով իսկ նպաստելով այդ մշակույթների պահպանմանը[1]:

Ներկայացնելով տարբեր մշակութային տեսակետներ և ավանդույթներ՝ լրատվամիջոցները նպաստում են նաև անհատների կողմից մշակութային ժառանգության ավելի լավ ըմբռնմանը և գնահատմանը, ինչն էլ, իր հերթին, նպաստում է միջմշակութային երկխոսության և փոխըմբռնման զարգացմանը: Եվ հակառակը՝ զանգվածային լրատվամիջոցներում ռասայական և էթնիկ խմբերին առնչվող տեղեկատվության խեղաթյուրումը կարող է խորացնել

[1] Տե՛ս **Savinova O.N.,** "The Role of Mass Media in Strengthening Intercultural Dialogue and Accord in Society", Asian Soc. Sci., vol. 11, no. 3, Dec. 2014, https://doi.org/10.5539/ass.v11n3p262

բացասական կարծրատիպերը և սահմանափակ պատկերացում տալ դրանց մասին, ինչը բացասաբար կանդրադառնա ինքնընկալման և միջխմբային հարաբերությունների վրա[1]:

Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանման և զարգացման տեսանկյունից հիշատակման արժանի է, օրինակ, Հայաստանի Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվող «Էթնոգույներ» հաղորդումը: Վերջինս ներկայացնում է Հայաստանում ազգային փոքրամասնություն հանդիսացող ժողովուրդների մշակութային առանձնահատկությունները, ազգային սովորույթները, կրոնը, լեզուն, խոհանոցը, միջազգային բարիդրացիական կապերը և այլն՝ ըստ այդմ նպաստելով մշակութային ժառանգության պահպանմանը, միջմշակութային երկխոսության և փոխըմբռնման զարգացմանը, կարծրատիպերի հաղթահարմանը և այլն:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են որոշակի քայլեր և միջոցառումներ՝ միտված ազգային փոքրամասնությունների մշակույթի զարգացմանը, պահպանմանը և տարածմանը, ինչը միանշանակ գովելի է: Սակայն կարծում ենք, որ այս ոլորտում պետության քաղաքականությունը պետք է լինի առավել հայեցակարգային, համակողմանի՝ ապահովելով այդ քաղաքականության ինստիտուցիոնալ բնույթն ու շարունակականությունը: Միայն այդպիսի քաղաքականությունն է, որ կարող է դառնալ այնպիսի գործուն կառուցակարգերի ձևավորման հիմնաքար, որոնք կնպաստեն ազգային փոքրամասնությունների մշակույթի շարունակական և անընդհատ պահպանմանն ու զարգացմանը:

Ասվածի հաշվառմամբ՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է մշակել և իրականացնել ոլորտին առնչվող հայեցակարգային, ինստիտուցիոնալ այնպիսի քաղաքականություն, որը կապահովի ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանման և զարգացման շարունակականությունն ու անընդհատությունը: Այդ համատեքստում կարևոր ենք համարում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման հարցերին առնչվող ռազմավարական փաստաթղթի մշակումը՝ հստակ անդրադարձ կատարելով վերջիններիս մշակութային իրավունքներին՝ միա-

[1] Տե՛ս **Anderson J. and Dixon-Payne D.,** "Representation in Imagery and Language," in Media Literacy, Equity, and Justice, New York: Routledge, 2022, pp. 47–56. DOI: 10.4324/9781003175599-8:

ժամանակ ապահովելով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ակտիվ ներգրավումը համապատասխան գործընթացներին:

5. Հասարակական կյանքում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը՝ որպես հավասարության և ներառականության երաշխիք

Հասարակական կյանքում ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցությունը հանդիսանում է խաղաղ և ժողովրդավարական հասարակության կարևոր բաղադրիչ:

Եվրոպական և այլ երկրների փորձը ցույց է տալիս, որ նման մասնակցությունը խրախուսելու համար կառավարությունները հաճախ ստիպված են լինում հատուկ մեխանիզմներ գործադրել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար: Նման կառուցակարգերը նպատակ ունեն նպաստել փոքրամասնությունների ինտեգրմանը հասարակական կյանքում և հնարավորություն տալ նրանց պահպանել իրենց ինքնությունը՝ դրանով իսկ նպաստելով պետության ամբողջականությանն ու լավ կառավարմանը[1]:

Այսպիսով, հասարակական կյանքում ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցության համար պայմանների ստեղծումը պետությունների կողմից պետք է դիտարկվի որպես լավ կառավարման անբաժանելի մաս և կարևոր առաջնահերթություն հավասարության խթանման և խտրականության բացառման իրենց ջանքերում[2]:

Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը հասարակական կյանքին նպաստում է ինչպես հավասարությանն ու ներառականությանը, այնպես էլ վերջիններիս ինտեգրմանը, նվազեցնում է հակամարտությունների առաջացման հավանականությունը և ամրապնդում է խաղաղությունը, կայունությունը և բարիդրացիական հարաբերությունները անհատների և համայնքների միջև[3]:

[1] Տե՛ս The Lund Recommendations on the Effective Participation of National Minorities in Public Life and Explanatory Note, 1999, https://www.refworld.org/legal/resolution/osce/1999/en/41639

[2] Հասանելի է https://www.ohchr.org/sites/default/files/Documents/HRBodies/HRCouncil/MinorityIssues/Welcome_by_Gay_McDougall_-.pdf հղումով:

[3] Տե՛ս Recommendations on the Effective Participation of National Minorities in Social and Economic Life, Organization for Security and Co-operation in Europe, 2023, https://www.osce.org/hcnm/socio-economic-recommendations

Հասարակական կյանքում ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցության սկզբունքն իր ամրագրումն է գտել տարբեր միջազգային փաստաթղթերում:

Օրինակ՝ Շրջանակային կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն՝ Կողմերը պետք է անհրաժեշտ պայմաններ ստեղծեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը մշակութային, հասարակական և տնտեսական կյանքում, ինչպես նաև պետական գործունեության մեջ, մասնավորապես, իրենց առնչվող հարցերում ապահովելու համար:

Ազգային փոքրամասնությունների մասնակցությունը կարող է դրսևորվել հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, օրինակ՝ քաղաքական, մշակութային, տնտեսական և այլն:

Նշված ոլորտներում ազգային փոքրամասնության ներկայացուցիչների բավարար ներգրավման բացակայությունը կամ նրանց մեկուսացումը հաճախ հանգեցնում է խտրականության տարբեր դրսևորումների[1]:

Քաղաքական կյանքին ազգային փոքրամասնությունների մասնակցությունը երաշխավորելու կառուցակարգերից մեկը օրենսդիր մարմնում նրանց համար քվոտաներ հատկացնելն է:

Նշված մոդելը կիրառվում է նաև Հայաստանի Հանրապետությունում՝ Ազգային ժողովում ազգային փոքրամասնության ներկայացուցիչներին սահմանված կարգով տեղեր հատկացնելով:

Այս առումով հիշատակման արժանի է ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածը, համաձայն որի՝ Ազգային ժողովում Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին:

Ասվածին զուգահեռ՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ պատգամավորների 4 մանդատ բաշխվում է ազգային փոքրամասնության ներկայացուցիչների միջև՝ ընտրություններին նախորդող վերջին մարդահամարի տվյալներով առավել մեծ թվով մշտական բնակչություն ունեցող առաջին չորս ազգային փոքրամասնություններից յուրաքանչյուրին՝ մեկ մանդատ սկզբունքով:

[1] Տե՛ս **Fernand V. and Elżbieta K. P.,** Effective Participation of National Minorities in Public Life: the UN's Perspective, Effective Participation of National Minorities and Conflict Prevention, Brill/Nijhoff, 12 Oct 2019, pages 17–42, https://doi.org/10.1163/9789004390331_003

Հարկ է նկատի ունենալ, որ ազգային փոքրամասնությունների մասնակցությունը հասարակական կյանքին կարևոր է ոչ միայն քաղաքական, այլև սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքին մասնակցության տեսանկյունից:

Այս առումով հատկապես կարևորվում է պետության կողմից համապատասխան քաղաքականության, ծրագրերի և միջոցառումների մշակման և իրացման, որոշումների կայացման գործընթացներում ազգային փոքրամասնության ներկայացուցիչների ներգրավումը:

Կարծում ենք, որ մշակութային, սոցիալական և քաղաքական ոլորտներում Հայաստանի Հանրապետության կողմից ձեռնարկվել և ձեռնարկվում են առանձին քայլեր ազգային փոքրամասնությունների՝ հասարակական կյանքում մասնակցությունն ապահովելու տեսանկյունից, օրինակ՝ Ազգային ժողովում մանդատներ հատկացնելը, մշակութային կամ կրթական ոլորտի աշխատանքներում կամ միջոցառումներում ազգային փոքրամասնությունների ներակայացուցիչներին ներգրավելը: Միևնույն ժամանակ, գտնում ենք, որ այս ոլորտում պետության քաղաքականությունը պետք է կրի մշտական, շարունակական, հայեցակարգային և առավել համընդգրկուն բնույթ՝ նպաստելով միջմշակութային երկխոսությանը, հասարակական համերաշխության և միասնականության ամրապնդմանը:

Հասարակական կյանքում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցության, վերջիններիս իրավունքների պաշտպանության և խթանման տեսանկյունից հիշատակման է արժանի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով հասարակական խորհրդի ձևավորման հանգամանքը[1]:

Խորհուրդը նպատակ ունի՝

1. աջակցել Պաշտպանին ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների խթանման և արդյունավետ պաշտպանության հարցերում,

2. ներգրավվել համապատասխան ոլորտային օրենսդրության ընդունմանը կամ կատարելագործմանն ուղղված աշխատանքներում,

3. ստեղծել ազգային փոքրամասնությունների ինքնության հիմնական տարրերի՝ կրոնի, լեզվի, մշակութային ժառանգության, ավանդույթների պահպանմանը և խթանմանը նպաստող միջավայր,

[1] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2784 հղումով:

4. ընդլայնել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման ոլորտում գործունեություն իրականացնող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցությունը,

5. նպաստել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների վիճակի անընդհատ բարելավմանը, ներառյալ՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացմանն ուղղված հետազոտությունների, ուսումնասիրությունների կամ վերլուծությունների իրականացմանը, համակարգային խնդիրների վերհանմանը և դրանց հիման վրա Պաշտպանին առաջարկների ներկայացմանը[1]:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ հարկ է արձանագրել, որ հավասարության և ներառականության ապահովման տեսանկյունից հասարակական կյանքում ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցության ապահովումն ունի առանցքային դերակատարում: Այն հնարավորություն է տալիս լսելի դարձնել որոշակի խմբին պատկանող անձանց ձայնը, կարիքներն ու խնդիրները, նպաստել ոլորտի պատշաճ և ճիշտ քաղաքականության մշակմանն ու իրացմանը, ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց շահերի պատշաճ պաշտպանությանը և իրավունքների խթանմանը:

6. Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալը՝ ներկայացնում ենք թեմային առնչվող հետևյալ եզրահանգումները.

1. Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության նպատակը պետք է լինի նրանց ինքնության պահպանման և զարգացման համար հավասար հնարավորությունների ապահովումն ու նրանց նկատմամբ խտրականության բացառումը, ինչպես նաև ներառականության ապահովումը հասարակական, քաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքում: Այդ հանգամանքը ենթադրում է պետության կողմից նշված ոլորտում ակտիվ և խթանող քաղաքականության իրականացում՝ առաջ եկող խնդիրներին արձագանքելու պարզ քաղաքականության փոխարեն: Անհրաժեշտ է ձեռնամուխ լինել նշված

[1] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդում, էջ 742, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով:

ոլորտում հայեցակարգային լուծումների մշակմանն ու իրացմանը, մասնավորապես՝ մշակել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման վերաբերյալ հայեցակարգ, ռազմավարություն և դրանից բխող գործողությունների ծրագիր՝ նախատեսելով կոնկրետ և թիրախային գործողություններ՝ հակախտրականության, ազգային փոքրամասնությունների ինքնության տարրերի պահպանման և զարգացման ուղղությամբ:

2. Իրավահավասարության ապահովումը, խտրականության բացառումը, ազգային փոքրամասնությունների իրավունքների խթանումը չեն կարող սահմանափակվել կոնվենցիոն կամ սահմանադրական մակարդակում կամ առանձին իրավական ակտերում հատվածական կամ հռչակագրային կարգավորումներ նախատեսելով: Նշված նպատակների իրականացման տեսանկյունից կարևոր է համապարփակ և միասնական իրավական ակտի ընդունումը, օրենսդրական արդյունավետ կառուցակարգերի նախատեսումն ու պատշաճ գործադրումը: Այս առումով առաջնահերթ ենք համարում ոլորտին առնչվող համապարփակ օրենսդրության շուտափույթ ընդունումն ու պատշաճ գործարկումը՝ ամրագրելով հստակ և որոշակի կարգավորումներ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավական կարգավիճակի, նրանց նկատմամբ խտրականության արգելքի բովանդակության վերաբերյալ:

3. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք: Նշված իրավունքի առնչությամբ պետության պարտավորությունը չի կարող ունենալ այնպիսի նեղ մեկնաբանություն, որ ենթադրի բացառապես պետության պասիվ քաղաքականությունը իրավունքների իրացմանը չմիջամտելու ձևաչափով: Հարկ է նկատի ունենալ, որ այս իրավունքը ենթադրում է նաև պետության պարտավորությունը՝ ստեղծելու նպաստավոր պայմաններ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ինքնության հիմնական տարրերը, այդ թվում՝ մշակույթը պահպանելու և զարգացնելու համար: Ասվածը ենթադրում է նշված ոլորտում պետության կողմից ակտիվ և խթանող քաղաքականության իրականացում՝ առաջ եկող խնդիրներին արձագանքելու կամ նշված իրավունքի իրացմանը չխոչընդոտելու պարզ քաղաքականության փոխարեն:

4. Ազգային փոքրամասնությունների՝ իրենց լեզուն ուսումնասիրելու կամ այդ լեզվով կրթություն ստանալու իրավունքի իրացման տեսանկյունից

բացառիկ կարևորություն ունեն կրթական հաստատություններում համապատասխան լեզուների պատշաճ դասավանդումը, ազգային փոքրամասնությունների լեզուներ (այդ լեզուներով) դասավանդող մասնագետների պատրաստումն ու առկայությունը: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ կարևոր է առաջարկված հայեցակարգային լուծումների շրջանակներում նախատեսել կոնկրետ և թիրախային գործողություններ՝ ուղղված կադրային ապահովման խնդիրների լուծմանը, այդ թվում՝ նշված ոլորտում բարձրագույն կրթությունը ապահովելու, բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան կառուցվածքային միավորներ ձևավորելու, ոլորտի մասնագետներ կրթելու և վերապատրաստելու ուղղությամբ:

5. Ազգային փոքրամասնությունների իրավունքների խթանման տեսանկյունից կարևոր է համապատասխան բնակավայրերում ազգային փոքրամասնությունների լեզվով տեղագրական նշումների առկայությունը, ինչը վկայում է պետության կողմից համապատասխան տարածքներում փոքրամասնության առկայության և դրա հետ ավանդական կապերի ճանաչումը, փոքրամասնության լեզուն հանրային տիրույթում տեսանելի դարձնելը՝ ըստ այդմ նպաստելով նաև տվյալ տարածքում բնակչության տարբեր խմբերի ներդաշնակ գոյությանը:

6. Ուսումնական ծրագրերը և ուսումնական նյութերը պետք է ուղղված լինեն բազմազանությունը գնահատելուն, տարբերությունների նկատմամբ հարգանք սերմանելուն, վերլուծական ու քննադատական մտածողության հմտություններ զարգացնելուն՝ նպատակ ունենալով բացառել հասարակական կյանքում ազգային փոքրամասնությունների անտեսանելիությունը: Հետևաբար, անհրաժեշտ է պատշաճ և բավարար քայլեր ձեռնարկել դպրոցական դասագրքերում և այլ ուսումնական նյութերում ազգային փոքրամասնությունների վերաբերյալ առավել ամբողջական տեղեկատվություն ներառելու ուղղությամբ, ինչը կնպաստի ազգային փոքրամասնությունների ինքնության ճանաչմանը, պահպանմանն ու զարգացմանը, խտրական դրսևորումների վերացմանը, ինչպես նաև կստեղծի առավել համերաշխ, հանդուրժող և տեղեկացված հասարակություն՝ սերմանելով հարգանք մշակութային բազմազանության նկատմամբ:

7. Ազգային փոքրամասնությունների մշակութային իրավունքների կարևորությունը դրսևորվում է իրենց ինքնության պահպանման, մշակութային ժառանգության, ավանդույթների և լեզուների պահպանման, միջմշակութային երկխոսության զարգացման և այլնի տեսանկյունից: Այս առումով կարևոր

դերակատարություն ունեն նաև զանգվածային լրատվության միջոցները, որոնք նպաստում են անհատների կողմից մշակութային ժառանգության ավելի լավ ըմբռնմանը, գնահատմանը, միջմշակութային երկխոսությանն ու փոխըմբռնման զարգացմանը: Եվ հակառակը՝ զանգվածային լրատվամիջոցներում էթնիկ խմբերին առնչվող տեղեկատվության խեղաթյուրումը կարող է տարբեր կարծրատիպեր տարածել հասարակության շրջանում: Հաշվի առնելով նշվածը՝ գտնում ենք, որ մշակութային իրավունքների ոլորտում պետությունը պետք է որդեգրի առավել հայեցակարգային և համակողմանի քաղաքականություն՝ ապահովելով վերջինիս ինստիտուցիոնալ բնույթն ու շարունակականությունը:

8. Հավասարության և ներառականության ապահովման տեսանկյունից հասարակական կյանքում ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցության ապահովումն ունի առանցքային դերակատարում: Այն հնարավորություն է տալիս լսելի դարձնել որոշակի խմբին պատկանող անձանց ձայնը, կարիքներն ու խնդիրները, նպաստել ոլորտի պատշաճ և ճիշտ քաղաքականության մշակմանն ու իրացմանը, ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց շահերի պատշաճ պաշտպանությանը ու իրավունքների խթանմանը: Ուստի անհրաժեշտ է շարունակական քայլեր ձեռնարկել հանրային կյանքում ազգային փոքրամասնությունների ներկայացվածությունը երաշխավորելու տեսանկյունից:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն, ընդունվել է 06.12.2015 թ., ուժի մեջ է մտել 22.12.2015 թ., ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:

2. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ընդունվել է 10.12.1948 թ., ուժի մեջ է մտել 10.12.1948 թ.:

3. Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիա, ընդունվել է 01.02.1995 թ., ուժի մեջ է մտել 01.11.1998 թ., ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/5(13):

4. Ընտրական օրենսգիրք, ընդունվել է 25.05.2016 թ., ուժի մեջ է մտել 01.06.2016 թ., ՀՀՊՏ 2016.05.30/42(1222) Հոդ. 456:

5. «Տեսալսողական մեդիայի մասին» օրենք, ընդունվել է 16.07.2020 թ., ուժի մեջ է մտել 07.08.2020 թ., Միասնական կայք 2020.07.27-2020.08.09 Պաշտոնական հրապարակման օրը 06.08.2020:

6. «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենք, ընդունվել է 20.11.2002 թ., ուժի մեջ է մտել 26.12.2002 թ., ՀՀՊՏ 2002.12.25/57(232) Հոդ. 1323:

7. «Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ», Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, 2023 թվականի հոկտեմբերի 13, թիվ E/C.12/ARM/CO/4:

8. Շրջանակային կոնվենցիայի կատարման վերաբերյալ ՀՀ վեցերորդ շրջանի ազգային զեկույցը, https://rm.coe.int/6th-sr-armenia-am/1680b19fb4

9. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդում, https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf

10. CCPR General Comment No. 18: Non-discrimination, UN Human rights committee, November 10, 1989, https://www.refworld.org/legal/general/hrc/1989/en/6268

11. General comment no. 20, Non-discrimination in economic, social and cultural rights, UN Committee on Economic, Social and Cultural Rights, 2009, https://digitallibrary.un.org/record/659980?v=pdf

12. ECRI Report on Armenia, 2023, https://rm.coe.int/sixth-report-on-armenia/1680ab9e33

13. Resolution on the Implementation of the Framework Convention for the Protection of National Minorities by Armenia, Committee of Ministers, 2023, https://search.coe.int/cm/pages/result_details.aspx?ObjectId=0900001680abccc9

14. Joint Opinion on the Draft Law on National Minorities, Venice Commission and DGII, 2024, https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2024)019-e.

15. Office of the High Commissioner for Human Rights, Note on the Sixth Session of the Working Group on Minorities of the Sub-Commission on the Promotion and Protection of Human Rights 22-26 May 2000.

16. Promoting Human Rights at Local and Regional Level, Council of Europe, 2016, https://rm.coe.int/168071b33b

17. General Observations of the Sub-Committee on Accreditation, Global Alliance of National Human Rights Institutions (GANHRI), 2018, https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Countries/NHRI/GANHRI/EN_GeneralObservations_Revisions_adopted_21.02.2018_vf.pdf

18. Evaluation by the Committee of Experts of the Implementation of the Recommendations for Immediate Action contained in the Committee of Experts'

fifth evaluation report on Armenia, 2021, https://rm.coe.int/min-lang-2021-17-evalria5-armenia-en/1680a44d26

19. Fifth Report submitted by Armenia, Advisory Committee on the Framework Convention for the Protection of National Minorities, 2020, https://rm.coe.int/5th-sr-armenia-en/16809eb7b3

20. Thematic Commentary No. 3, Advisory Committee on the Framework Convention for the Protection of National Minorities, 2012, https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016800c108d

21. Protection and Promotion of the Cultural Rights of Persons belonging to Minorities within UNESCO's Fields of Competence, 1994, https://unesdoc.unesco.org/in/documentViewer.xhtml?v=2.1.196&id=p::usmarcdef_0000096922&file=/in/rest/annotationSVC/DownloadWatermarkedAttachment/attach_import_1c05a2a7-ccda-49b5-8433a20fe2a65e69%3F_%3D096922engo.pdf&locale=en&multi=true&ark=/ark:/48223/pf0000096922/PDF/096922engo.pdf#%5B%7B%22num%22%3A483%2C%22gen%22%3A0%7D%2C%7B%22name%22%3A%22XYZ%22%7D%2Cnull%2Cnull%2C0%5D

22. Second Opinion on Bosnia and Herzegovina, First Opinion on Georgia, Third Opinion on the Russian Federation, Fourth Opinion on Ukraine, Fourth Opinion on Slovakia, Fifth Opinion on Romania; Fifth Opinion on Slovenia, Fifth Opinion on Albania, ACFC.

23. ACFC Thematic Commentary No. 2, 2008, https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016800bc7e8

24. Recommendation CM/Rec(2011)6 of the Committee of Ministers to member States on intercultural dialogue and the image of the other in history teaching.

25. Recommendation CM/Rec(2020)2 of the Committee of Ministers to member States on the inclusion of the history of Roma and/or Travellers in school curricula and teaching materials.

26. Thematic Commentary No. 1 of Framework Convention, https://rm.coe.int/prems-104224-gbr-2568-framework-convention-thematic-commentary-no1-a4-/1680b1ff31

27. Fifth Opinion on Armenia, ACFC, https://rm.coe.int/5th-op-armenia-en/1680aa2a81

28. The Lund Recommendations on the Effective Participation of National Minorities in Public Life and Explanatory Note, 1999, https://www.refworld.org/legal/resolution/osce/1999/en/41639

29. Recommendations on the Effective Participation of National Minorities in Social and Economic Life, Organization for Security and Co-operation in Europe, 2023, https://www.osce.org/hcnm/socio-economic-recommendations

30. **Dieter K.,** “The Protection of Minorities and Indigenous People Respecting Cultural Diversity”, Max Planck, Yearbook of United Nations Law, Volume 11, 2007, pages 233-263, https://www.mpil.de/files/pdf1/mpunyb_06_kugelmann_11.pdf

31. **Savinova O.N.,** "The Role of Mass Media in Strangthening Intercultural Dialogue and Accord in Society," Asian Soc. Sci., vol. 11, no. 3, Dec. 2014, https://doi.org/10.5539/ass.v11n3p262

32. **Anderson J. and Dixon-Payne D.,** "Representation in Imagery and Language," in Media Literacy, Equity, and Justice, New York: Routledge, 2022, pp. 47–56. DOI: 10.4324/9781003175599-8.

33. **Fernand V. and Elżbieta K.P.,** Effective Participation of National Minorities in Public Life: the UN’s Perspective, Effective Participation of National Minorities and Conflict Prevention, Brill/Nijhoff, 12 Oct 2019, pages 17–42, https://doi.org/10.1163/9789004390331_003

34. https://www.ohchr.org/sites/default/files/Documents/HRBodies/HRCouncil/MinorityIssues/Welcome_by_Gay_McDougall_-.pdf

35. https://ombuds.am/am/site/ViewNews/3063

36. https://ombuds.am/am/site/ViewNews/3065

37. https://ombuds.am/am/site/ViewNews/3104

38. https://ombuds.am/am/site/ViewNews/2784

ПРАВА НАЦИОНАЛЬНЫХ МЕНЬШИНСТВ В АРМЕНИИ: ПРОБЛЕМЫ И РЕШЕНИЯ

Аннотация

Работа посвящена вопросам, связанным с защитой и поощрением прав лиц, принадлежащих к национальным меньшинствам в Республике Армения. В рамках работы были подробно изучены и подняты существующие в сфере проблемы, международные и внутригосударственные правовые нормы, касающиеся запрета дискриминации в отношении лиц, принадлежащих к национальным меньшинствам, элементов сохранения идентичности, таких как язык, религия, традиции и права на сохранение и развитие культуры, рекомендации, данные Армении международными

организациями. В результате всестороннего анализа существующих проблем и вышеупомянутых регулирований были представлены предложения, направленные на комплексное решение проблем и совершенствование сектора.

Ключевые слова: национальное меньшинство, защита и поощрение прав, запрет дискриминации, элементы сохранения идентичности, право на сохранение языка, сохранение культурной самобытности, эффективное участие в общественной жизни.

THE RIGHTS OF NATIONAL MINORITIES IN ARMENIA: PROBLEMS AND SOLUTIONS

Annotation

The work is devoted to issues related to the protection and promotion of the rights of persons belonging to national minorities in the Republic of Armenia. The work examined in detail problems in this area, international and domestic legal norms concerning the prohibition of discrimination against persons belonging to national minorities, such elements of identity preservation as language, religion, traditions, and the right to preserve and develop culture, and recommendations given to Armenia by international organizations. As a result of a comprehensive analysis of the existing problems and the aforementioned regulations, proposals were presented aimed at comprehensively solving the problems and improving the sector.

Keywords: national minority, protection and promotion of rights, prohibition of discrimination, elements of identity preservation, right to preserve language, preservation of cultural identity, effective participation in public life.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 26.05.2025 թ., տրվել է գրախոսության 02.06.2025 թ., ընդունվել է տպագրության 11.06.2025 թ.: